ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ, ՈՐ Ի ԿՐԱՄՆՈՅԱՐՍԿ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն բերած Ձեր բարի եւ մեծարժէք ծառայութիւնների համար:

Ցարգարժան պրն. Մուրադեան, ահաւասիկ, Հայրապետական անդրանիկ այցով եկել ենք հեռաւոր Կրասնոյարսկ քաղաք եւ գոհաբանական աղօթքը Մեր հոգում կատարեցինք Ձեր անձնական նախաձեռնութեամբ ու հովանաւորութեամբ կառուցուած Սուրբ Սարգիս եկեղեցու օծման սրբազան արարողութիւնը, որն առաջին հայկական եկեղեցին է Ռուսաստանի Դաշնութեան սիբիրեան տարածաշրջանում: Այսօր Մեր հոգին ուրախ է, քանզի ականատես ենք հայ համայնքի համախմբմանը մեր Եկեղեցու շուրջ եւ համայնքային կեանքում ծաւալած Ձեր ազգօգուտ ու եկեղեցաշէն գործունէութեանը, որին ծանօթ էինք նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խանդավառօրէն ներկայացուած զեկոյցից: Սուրբ Սարգիս եկեղեցին, որ վկայութիւն է առ Աստուած Ձեր անկեղծ հաւատի եւ պսակը ազգաշէն Ձեր բոլոր գործերի, ընդմիշտ պիտի ծառայի մեր ժողովրդին՝ դառնալով Կրասնոյարսկի եւ շրջակայքի հայութեան հոգեւոր-ազգային կենտրոն:

Ցարգարժան պրն Մուրադեան, սիրով ընդառաջելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ հաւատաւոր Ձեր կեանքով եւ նոյն հայրենապաշտ ոգով, որպէս Սուրբ Սարգիս եկեղեցու Ծխական խորհրդի ատենապետ, Դուք պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ Աստուածասէր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Ապրիլի
Ցամի Տեառն 2003 եւ ի թուին Հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 149